# Խաչիկ Դաշտենց

## Ռանչպարների Կանչը

4

### ԽԼԱԹԻ ՍԱՐԵՐՈՒՄ

Սողորդը Խլաթի մեջ էր:

Հայերը և քրդերը այդ գավառին Խլաթ էին ասում, թուրքերը՝ Ախլաթ:

Ես դեպի Խլաթ դիմեցի Սողգոմից շարունակ դեպի արևելք գնալով և անցնելով Մշո դաշտի Ազաղբյուր և Արագիլի բույն գյուղերը:

Արագիլի բու՛յն: Հայկական այդ գողտրիկ բնակավայրի անունը տարիների ընթացքում բերանից բերան զարկվելով դարձել էր Ալիգլբուն:

Այդ գյուղի ծայրին մի կին ինձ կանգնեցնելով՝ հարցրեց.

Դո՞ր կերթաս, այ տղա:

Խլաթ կերթամ:

Խլաթ ո՛ր գեղը կերթաս:

Սողորդ կերթամ, ասացի:

Զգույշ Շամիրամա ավազներից և մանրիկ փշերի բը– լէրից: Ղարիբ ես, լաո: Ղարիբ աղավնին կուտի ետևից կերթա, թակարդ կընկնի, զգուշացրեց դաշտեցի պառավը և պատմեց Շամիրամա ավազների հին զրույցը.

Նեմրութ լեռան տիրակալը մի ամբարտավան իշխան է եղել: նա թրով հարձակվել է աստծո վրա, որ նրան հաղթի և իրեն հայտարարի աստված: Գոռոզ իշխանը Վանա ծովի ավազները ուղտերին բարձած բերել է տալիս դեպի Նեմրութ, որ իր գահը բարձրացնի երկինք հասցնի և թրի մի հարվածով վայր գլորի աստծուն ու նստի նրա տեղը: Երկնավորը, զայրացած, իշխանի ավազով բեռնված ուղտերի քարավանը քարացնում է դեպի Շամիրամ գյուղը շարժվելու ճանապարհին, իսկ Նեմրութին անիծելով՝ որոտմունքով ցնցում է հիմքից, գագաթի քարաժայռերն ու փոշին շպրտելով ստորոտների վրա և տեղը գոյացնելով մի հսկայական փոս, որից մինչև այսօր դեղին գոլորշիներ են բարձրանում: Անզգամ իշխանին պատժելով, աստված, այնուամենայնիվ, լեռան խառնարանը լցնում է սառնորակ ջրով, որ երկրագործ մարդիկ իրենց դաշտերը ոռոգեն:

Անզգամը աստված չունի, անգութը՝ խիղճ, ասաց դաշտեցի կինը և գնաց:

Չնայած, որ Ալիգլբունցի պառավը ինձ զգուշացրեց Շամիրամի «ուղտոլ քարերից», բայց ես մոլորվեցի և քիչ մնաց անհետանայի Նեմրութի ավազաբլուրների մեջ: Շամիրամը շինված էր Նեմրութ լեռան մի փոքրիկ ձորահովտում: Կողքին չորս մեծ բլուրներ կային, իսկ ավելի հեռվում կանգնած էր մի հինգերորդ սրածայր բլուր, որ վիզը երկարած Նեմրութի գագաթին էր նայում: Իսկական ուղտի էր նման: Ինձ թվաց, թե այդ հինգ քարացած ուղտերը հիմա վեր կկենան ու կգան ինձ վրա ու ես, այդ մտքից սարսափած, արագացրի քայլերս, որ Սողորդ հասնեմ: Բայց այս անգամ դեմս ելավ Գրգուռ լեռան մանրիկ փշերի ու մացառների դաշտը: Ոտքերիս տակից սահող ավազափոշին և այդ մանրիկ փշերն ու բլերը ինձ անվերջ քաշում էին դեպի իրենց խորքը: Իսկապես, այդ վայրերի համար ես ղարիբ աղավնի էի, և ամեն քայլափոխին թակարդը լարված էր: Իմ ոտնամաններից մեկը կորավ ավազների մեջ: Խառնեցի ավազները, բայց չգտա, երկյուղս սաստկացավ ու ես մի պահ զղջացի իմ այդ հանդուգն ուղևորության համար:

Հազիվ էի հաղթահարել ավազափոշին և ուղտափշերը, երբ նոր արգելքի հանդիպեցի: Սուլթանի ոստիկանները բռնել էին սասունցի մի ծերունու և մազի պարանով կապկպած, սարից–սար քարշ տալով, ստիպում էին նրան հայտնել հայդուկների տեղը: Խոսակցությունից հասկացա, որ ծերունուն տանջող ոստիկանապետի անունը Ղալիպ էր, իսկ տանջվողի անունը՝ ռես Խեչո:

Ու՞ր տեսար Սերոբին ու իր ֆիդայիներին: Ինչպե՞ս տեսար, գոռում էր ոստիկանապետը:

Անցյալ ամսին տեսա: Ինձ ստիպեցին, թե՝ մեզ տար Կուրտիկ սար: Ես ընկա իրենց առաջ ու տարա Կուրտիկ:

Կուրտիկից ու ր գնացին:

Կուրտիկից անցան Քոսուրա սար:

Իսկ Քոսուրա սարից ու՞ ր տարար:

Քոսուրա սարից անցան գնացին Խաթավին:

ճանապարհին պապիրոս վառեցի՞ն:

Մեկ-երկու հատ:

Մնացորդները գետին թափեցի՞ն:

Չէ, էֆենդի, ձեռքերի մեջ փշրեցին, քամուն տվին:

Կանգնած տեղը խո՞տ էր, թե հող:

Խոտ էր, էֆենդի:

Ի՞նչ էին հագած:

Բոլորն էլ չուխա շորեր: Մի քանիսի գլխին փափախ կար:

Ո՞ր կողմով գնացին:

Մի Խաթավին սար՝ տաս ճամփա: Որ ճամփով գնացին՝ չգիտեմ:

Դու ինձ գիտես, ոես Խեչո, գոռաց Ղալիպ էֆենդին: Ես քեզ էլ եմ ճանաչում, քո պապին էլ, քո ջոջ պապին էլ:

Ի՞նչ պիտի անես, շատ-շատ գլուխս պիտի կտրես՝ մի ափ արյուն պիտի երթա... ես բոլոր ֆիդայիների պա՞պն եմ, որ նրանց տեղը իմանամ:

Դու իբրև հպատակ պարտավոր ես բռնել և մեր ձեռքը հանձնել սուլթանի թշնամիներին:

Դրանք թռչուն են, էֆենդի, ինչպե՞ս բռնենք: Ֆիդային սահման չունի: Հարյուր աշիրի միջով կանցնեն, հազար սարով կգնան կթառեն իրենց ուզած սարին: Վաղն էլ կթռչեն կերթան ուրիշ սարեր: Թագավորի ձեռքը երկար է, թող գնա բռնի:

Ուրեմն դու չե՞ս ուզում Սերոբի խմբի տեղն ասել:

Որ սպանեք էլ՝ չեմ ասի:

Նեմրութի վրա չե՞ն:

Որ Նեմրութի վրա լինեին, կթողնե՞ին, որ դու և քո կարմիրգլուխ ասկյարները ինձ էսպես տանջեք:

Խեչոն խոսում էր համարձակ, գրեթե բոռալով, չիբուխն էլ բարկությունից գետնին թխկթխկացնելով:

Իսկ երբ Սերոբը Կուրտիկ էր, ի՞նչ ասաց գյուղացիներին:

Սերոբն ասաց. «Սուլթանի երկրում առանց հացի մնացեք, առանց գենքի մի մնացեք»:

Էլ Ի՞նչ ասաց:

Յատուկ Պոէմ

Հետո ասաց. «Ես բախտավոր ընտանիքի զավակ էի: Բայց պետք է բախտավորները երբեմն լան, որ թշվառները մխիթարվեն: Տեսեք, մեր շեն տունը ձեզ օրինակ. ես նախ մեր տունը՝ Խլաթա Խչեի մեծ օջախը քանդեցի, որ շատ մայրեր իրավունք չունենան ինձ անիծելու, ասելով. «մեր տուն քանդողի տունը քանդվի»:

Եվ դու չե՞ս ուզում այդ ապստամբի տեղը մեզ ասել:

Ես նրա ասածը ասացի, բայց տեղը չգիտեմ:

Շու՛տ, ասա Սերոբի տեղը, թե չէ քեզ կխորովենք ավազների մեջ:

Չեմ ասի:

Ղալիպի հրամանով ոստիկանները շինական Խեչոյի մազե պարանը նորից ամուր ձգեցին և քարշ տալով տարան դեպի Շամիրամի ավազաթմբերը: Այստեղ դարձյալ չարչարեցին նրան և, վզից մի մեծ ապառաժ կապելով, թաղեցին ավազների մեջ: Միայն գլուխը դուրս մնաց: Ապա ուղտափշերի մի կույտ դիզեցին շուրջը, չիբուխի կոթը մտցրին բերանը. «Դե, հիմա ծխիր», ասացին, և փշերը կրակ տալով՝ հեռացան:

Երբ նրանք իջան ձորը, ես ավազների միջով սողալով մոտեցա ռանչպար Խեչոյին, կրակները ոտքով, ձեռքով մի կողմ հրեցի և կապանքը քանդելով ապառաժը հեռացրի նրա կրծքից:

Շուտով տեսա, թե ինչպես ծերունին ավազներից ելավ և չիբուխը զայրացած ծխելով իջավ դեպի ձորը: Իսկ ես Արաբոյի ծխատուփը ծոցիս մեջ, անվհատ շարունակեցի իմ վերելքը:

Վերջապես մեծ դժվարությամբ մագլցեցի Նեմրութի լանջերն ի վեր, իմ ետևում թողնելով Շամիրամի ավազաբլուրները և Գրգուռի ուղտաքարերն ու ուղտափշերը:

## ՆԵՄՐՈՒԹԻ ՎՐԱ

Սողորդը Նեմրութ լեռան բարձրադիր լանջին էր: Գտա իմ որոնած տունը և դուռը ծեծեցի:

Ո՞մ ես փնտրում, հարցրին:

Աղբյուր Սերոբին:

Դու սար պիտի երթաս, ասացին: Ինքն էլ, Աղբյուր Սոսեն էլ սարն են:

Տեսան, որ իմ ոտքը բոբիկ է, դես-դեն ընկան, որ մի հարմար ոտնաման գտնեն՝ չգտան: Ստիպված իմ ունեցածն էլ թողեցի այդտեղ, որ ազատ քայլեմ և տանից հաց առնելով ընկա ճամփա:

Խեղճ հայրս ինչ իմանար, որ իր սոլկար որդին մի օր առանց ոտնամանի կմնար:

Անցա գերեզմանոցի մոտով, որ պատով բաժանված էր գյուղից և շարժվեցի սարն ի վեր: Իմ բախտից ամբողջ լեռը ծածկված էր գինարբուկի կապույտ ծաղիկներով և թովիչ կանաչով:

Սերոբ Աղբյուրին ես գտա Նեմրութի քարոտ լանջին, մի ժայռի նստած: Սերոբն ավելի հաղթահասակ էր, քան Արաբոն և ավելի լավ զինված: Արաբոյի ունեցածը մի հասարակ բերդանկի էր, իսկ Սերոբի ձեռքին մոսինի կար: Մեջքի շուրջը փաթաթված կաշյա փամփշտակալները ուսերից իջնելով լայն խաչկապ էին կազմել կրծքի վրա: Դեմքը թուխ էր, երկու խոշոր աչքերով լուսավորված: Գլխին ոլորված էր մոխրագույն թաշկինակ՝ ծայրերն արձակ:

Եկել ես ճնճղու՛կ տեսնելու, հարցրեց Աղբյուրը, ոտքից-գլուխ չափելով իմ հասակը:

Այդ օրերին ճնճղուկ էին անվանում այն հայ շինականներին, որ ըմբոստանալով բռնության դեմ, բարձրանում էին սար, ի նկատի ունենալով նրանց թափառիկ, ոստոստուն կյանքը:

Ոչ, եկել եմ ճնճղուկ դառնալու, համարձակ պատասխանեցի ես և իմ ծոցից հանելով ծխախոտով լի տուփը՝ մեկնեցի նրան:

Սերոբը տուփը մոտեցրեց քթին:

Կարմիր Ծառի թութուն է: Ծխու՞մ ես:

Ոչ:

Ապա ի՞նչ գործ ունի այս տուփը քեզ մոտ:

Տուփը Արաբոն տվեց, իսկ ծխախոտը Կարմիր Ծառից վերցրի:

Դու Արաբոյին տեսե՞լ ես:

Ուղիղ մեկ տարի նրա մոտ եմ ծառայել, հպարտությամբ նկատեցի ես:

Նրա ձիու անունը ի՞նչ էր:

Տիլիբոզ:

Որ էդպես է, տուփը քեղ մոտ պահիր, իսկ թութունը տուր ինձ: Այս ասելով Սերոբ Աղբյուրը ծխախոտը դատարկեց իր տոպրակի մեջ և տուփը վերադարձրեց ինձ:

Դու դեռ շատ փոքր ես զենք բանեցնելու համար, ասաց Աղբյուրը, կամենալով ինձ ետ ուղարկել:

Ուզեցի ասել, որ ես հրացան գործածել գիտեմ, բայց նա հանկարծ իր զինափողին նայելով՝ ասաց.

Կարո՞ղ ես ոզնի բռնել:

Ինչու՞ չէ, ասացի, դրանից էլ հեշտ բան:

Դե գնա ոզնի բռնիր:

Ես անմիջապես գնացի սար և մի քանի ոզնի բռնելով եկա իր մոտ:

Ապրես: Ինձ մեկն էր հարկավոր, իսկ դու միանգամից մի քանիսը բերիր: Դե հիմա ոզնու ճարպով մաքրիր իմ զինափողը:

Սերոբ Աղբյուրի հրացանի փողը երկար էր և օղակավոր: Ես նրա ներկայությամբ մաշկեցի ոզնիներից մեկին, հանեցի ճարպը և սկսեցի նրա զինափողը զգուշությամբ մաքրել: Շատ եռանդուն էի աշխատում և նրան դուր էր գալիս իմ պատրաստակամությունը:

Ջենքը մաքրելուց հետո Սերոբը դարձավ ինձ.

Կուզե՞ս ինձ մոտ մնալ:

Արաբոյից հետո իմ միակ փափագն է ձեզ հետ լինել, ասացի ես:

Ու ես մնացի Նեմրութի վրա, Սերոբ Աղբյուրի մոտ:

Մինչև իմ նեմրութ գալը այս ռանչպարը արդեն հայտնի էր դարձել բռնակալության դեմ մղած իր կռիվներով: Ինքը և իր կին Սոսեն տասնվեց զինվորներով փայլել էին մանավանդ Բաբշենի նշանավոր ճակատամարտում և մտել երգերի մեջ:

Ռանչպար Սերոբը ընտանիքով էր հալածական սուլթանից: «Իմա՞լ էնենք, սանդուղք չկա, որ դնենք էլնենք երկինք աստծուն բողոքելու: Ուզենք-չուզենք սարեր պիտի քաշվենք մեր նամուսն ու կյանքը պաշտպանելու հույսով», ասել էր Սոսեն ու ապավինել Նեմրութին:

Սոսեին ես տեսա հաջորդ օրը արևածագին, երբ Սերոբի հետ հասել էինք լեռնային մի գետակի: Դիմացի ափին յոթ-ութ զինված տղամարդիկ երևացին: Նրանք ոտքերը քշտելով, ոտնամանները ուսերից կախ մտան ջուրը: Նրանցից մեկը իր ետևից եկող մի երիտասարդ զինվորի ձեռքից բռնած, մյուս ձեռքով զենքը պահած, մաքառում էր ալիքների դեմ: Լեռնային պաղ ջուրը խփում էր ծնկներից բարձր: Ետևից եկող զինվորը գետակի մեջտեղ հասնելով, ստիպված եղավ վերնավարտիքի ծալքերը մի քիչ ավելի վեր բարձրացնել: Մեկ-երկուսը զինվորներից, այս բանը նկատելով, երեսները շուռ տվին, իսկ երիտասարդ զինվորի ձեռքից բռնած լեռնականը ուղղակի թևով ծածկեց երեսը:

Ետևից եկող զինվորը Սոսեն էր, արական զգեստով ծրպտված: Բոլորը թրջված դուրս եկան ջրից: Սոսեն առանձնացավ և, տաբատի ծալքերը իր սրունքների

կապույտ երակներին իջեցնելով, սկսեց ոտնամանները հագնել: Տեսա, թե ինչպես մի զինվոր Սերոբ Աղբյուրի կողքով անցնելիս խուլ տրտնջաց.

Չեղա՛վ, չեղա՛վ, փաշա:

Խարտյաշ, գեղեցիկ կին էր Սոսեն, վայելուչ սլացիկ հասակով, վարդագույն դեմքին մի հպարտ ժպիտ: Բայց նա ավելի հպարտ ու գեղեցիկ էր իր հայդուկային զգեստի մեջ, մազերը կրծքին և մեջքը փամփուշտներով գոտեպինդ:

Սերոբ Աղբյուրը միացավ իր «ճնճղուկներին» և խումբը շարժվեց:

Ոչ միայն Սոսեն, այլև Սերոբի երկու ռանչպար եղբայրները և մեծ որդին, սուլթանի բռնակալությունից փախչելով, նույնպես դեգերում էին լեռներում:

Սերոբի զինվորները լեռնցի և դաշտեցի գյուղացիներ էին: Մի քանիսի անունները առաջին օրը նույնիսկ սարսափ ազդեցին վրաս. Առյուծ Ավագ, Փալաբեխ Կարապետ, Ջուլումաթ Օհաննես, Կայծակ Անդրեաս, Լոլո Հաջի, Կարկուտ Թադե:

Նեմրութի վրա մնալով ես դարձա անբաժան Սերոբ Աղբյուրի «ճնճղուկներից»: Ոգնի էի բռնում սարերում, մաքրում-յուղում էի նրանց զինափողերը, հովիվներից հաց ու կաթ էի բերում նրանց համար:

Այդ յոթ-ութ զինվորները միշտ միասին էին և Սոսեն նրանց հետ էր: Նրանք երբեմն անհետանում էին խմբով և ես չգիտեի, թե որ ուղղությամբ գնացին և ինչով են զբաղված:

Հայ շինականները հաճախ էին սար գալիս «Սերոբ, հասնանցի քրդերը մեր նախիրը տարան, օգնության հասիր: Սերոբ, Արաբոն չկա, մեր տերը դու ես, Իկնա գյուղի վարժապետին նորից բանտ տարան»:

Ու ամեն տեղ էր ռանչպար Սերոբը: Բոլորի սրտի ծարավը կոտրում էր, դրա համար էլ անունը Աղբյուր Սերոբ էր:

Յատուկ Պոէմ

Փետրվարյան մի ձյունոտ օր, երբ մենք Սողորդում էինք, սուլթանի զորքը հանկարծ պաշարեց գյուղը: Փնտրում էին հայդուկապետին և նրա խմբին: Սերոբը վերցրեց հրացանը և մեն-մենակ ելավ գյուղից, որ կոտորածի պատճառ չդառնա: նա հագած էր լաքան և հանգիստ գնում էր ձյուների վրայով: Սուլթանի զինվորները չէին կարողանում ետևից հասնել, որովհետև ձիերը մինչև գավակները խրվում էին ձյան մեջ: Սերոբը երբեմն-երբեմն ետ էր դառնում և կրակում: Երեք ռոմի ձիավոր սպանվեցին: Նա բարձրացավ Նեմրութ լեռը և աչքով ինձ էր որոնում, իսկ ես մի կապոց հաց շալակած արդեն հասել էի լեռան գագաթը և հանգիստ նստած սպասում էի նրան: Ոստիկանները կարծելով, թե Սերոբը խեղդված է նեմրութի դաշտերի մեջ, թողել հեռացել էին գյուղից:

Սերոբ Աղբյուրը ինձ իր հետ առնելով հասավ լեռան հրաբխաբերանը, որի լայնածավալ խորքի մեջ տաք ջրեր կային՝ շեկ գոլորշիների ամպով ծածկված:

Երբ ամենքը, հայ թե թուրք և քուրդ համարել էին Սերոբին զոհ գնացած Նեմրութի ձյուներին, հանկարծ Խլաթի գյուղերում հայտնվեց Սողորդի հերոսը, և մարդիկ սկսեցին նրա շուրջը առասպելներ հյուսել և նրան կոչել Նեմրութի ասլան: Այդ անունը մտավ քրդական երգերի մեջ և հասավ սուլթանի ականջին:

Այդ նույն տարվա սեպտեմբերին Սոսեն անհետացավ: Բագրեվանդի հայ գյուղացիները ըմբոստացել էին սուլթանի դեմ: Սոսեն բարձրացել էր Բագրեվանդի լեռները և ղեկավարել ըմբոստ շինականների ապստամբությունը:

Սակայն Նեմրութի Սերոբի՝ կնոջ հետ սարերում թափառելը դուր չէր գալիս իր խմբի զինվորներին: Սոսեն քաջ էր, բայց քաջերի քաջին վայել չէ կնոջը խմբի հետ ման ածել թեկուզ տղամարդու հագուստով:

Սոսեի պատճառով Սերոբից արդեն բաժանվել էին մի քանի զինվորներ, որոնցից մեկը իր հին զինվոր Անդրանիկն էր:

Բողոքողներից երեքը Սերոբի երեք ամենասիրած զինվորներն էին. մեկը Կայծակ Անդրեասն էր, Խլաթի Շամիրամ գյուղից: Սա միշտ խմբի առջևից էր գնում և պատասխանատու էր նրա երթի համար: Սարսափազդու դեմք ուներ Անդրեասը, ոչխարենու մի ահագին գդակ գլխին և բեղը մինչև ականջները

սրած:

Մյուսը Լոլո Հաջին էր կամ Հաջի Գևոն, որ մասնակցել էր Խանասարի և Բաբշենի կռիվներին և հավատարիմ թիկնապահն էր Սերոբի: Երրորդը Կարկուտ Թադեն էր, Սասունի Փեթար գյուղից: Սա մանուկ հասակից էր զենք վերցրել իր հոր կողքին մասնակցելով սասունցի իշխան Գրքոյի և իշխան Պետոյի գլխավորությամբ մղած հերոսական կռիվներին:

Անհանգիստ զինվոր էր Թադեն, սատիկ արագաշարժ ու անհամբեր: Կռիվը չսկսած, սա միշտ առաջինն էր պայթեցնում գնդակը: Հրացանը շտկում էր ու բլթակը քաշում:

Մի օր սա առանց հրամանի նետվեց մի ժայռի ետև և փակաղակը արագությամբ բացում ու փակում էր չխկոցով:

Էդ ի՞նչ կենես, Թադե, հարցրեց Սերոբ Աղբյուրը հեռվից մոտենալով:

Գյուլեքի սերտն ու փուլը կշտկեմ, փաշա, պատասխանեց Թադեն և բեղը խածնելով՝ բլթակը նորից քաշեց:

Սերոբը բարկացավ, փակաղակը ձեռքից առավ և սպառնաց, որ եթե շարունակի խախտել կարգապահությունը և առանց հրամանի կրակել՝ կհեռացվի խմբից:

Չեղա՛վ, չեղա՛վ, փաշա, այս խոսքերը հաճախ էին կրկնում Կայծակ Անդրեասը, Լոլո Հաջին և Կարկուտ Թադեն, երբ լեռնային հորդ գետակներն անցնելիս՝ ստիպված էին լինում հերթով բռնել Սոսեի դաստակից:

Ու մի օր նրանք ասացին Սերոբին.

Սոսեին ուղարկիր Սասուն, իսկ դու մնա Նեմրութի վրա:

Ջուր անցնելու ժամանակ նա ի՞նչ իրավանք ունի մեր ներկայությամբ տկլորանալու: Մեղք է նրա ոտքերին նայելը:

Սոսեի պատճառով մի օր կարող է փորձանք գալ մեր գլխին:

Յատուկ Պոէմ

Սերոբի հոգին Բաբշեն էր, իսկ սիրտը՝ Սասուն:

Սասնո Գելի գյուղում նա Տեր Քաշ անունով մի հին բարեկամ ուներ: Տեսավ, որ իր զինվորների խոսքը արդար էր, վերցրեց Սոսեին ու տարավ Գելի:

Ինձ էլ իր հետ տարավ:

Գելին կամ Գելիեզուզանը ձորի մեջ էր և գետակով բաժանված երկու մասի: Այդ Գյուղը շատ թաղեր ուներ և ամեն թաղը մի անուն: Գյուղի ետևը Անդոկ սարն էր: Բոլոր տները շինված էին Անդոկի թեք լանջին, ամեն մեկը մի ժայռի վրա ու մի թաղի մեջ: Գլխավոր թաղերն էին՝ Տաղվրնիկ, Հարսնգոմեր, Ղարիպշան, Մխիթար, Տեղ, «Գյուղ» կամ Գելի:

Տեր Քաշի տունը «Գյուղի» մեջ էր:

Ծեծեց Տեր Քաջի դուռը և ասաց. «Սոսեին քեզ մոտ պահիր, իսկ ինձ լուսաբացին դիր ճանապարհ»:

Տեր Քաջն ասաց. «Եկ դու էլ մնա Սասուն: Էսքան ժամանակ Խլաթ եղար, մի քանի տարի էլ մեզ մոտ ապրիր»:

Խութեցիք ընկան ոտքը՝ ասացին.

Արաբոն չկա, եկ տեր կանգնիր Արաբոյի երկրին:

Ու Սերոբի մի գիշերը դարձավ շաբաթ, շաբաթը՝ ամիս:

Տեսնելով, որ Նեմրութի Ասլանը Ուշանում է, իր զինվորներն էլ եկան Սասուն:

Սերոբը մի որդի ուներ Խլաթում, անունը՝ Հակոբ և երկու եղբայր՝ Մխո և Զաքար:

Երեքն էլ հայդուկ էին:

Նրանք էլ եկան Սասուն:

## ԿՐԱԿՈՑ ԳԵԼԻ ԳՅՈՒՂՈՒՄ

Արաբոյի մահից հետո Սասունում իր քաջագործություններով անուն էր հանել Գևորգ անունով մի անվեհեր երիտասարդ:

Գևորգը Սասնո Բսանք գավառի Մկթինք գյուղից էր, Արաբոյի և Սերոբ Աղբյուրի հին զինվորներից մեկը:

Սրա հայրը հայտնի որսորդ էր: Որդուն տվել էր Առաքելոց վանք, որ քահանա դառնա: Մի օր որդին վանքից գալիս է տուն: Տեսնում է պատից մի չախմախլի հրացան կախված և տակը թախտին մի հսկա քնած՝ սև արան հագին, երեսով դեպի պատը:

Կա չկա սա իմ հայրն է, ասում է Գևորգը, աչքը պահած պատից կախված զենքին:

Արթնացնում է հսկային ու ասում.

Ես չորս տարի կարդացի վանքում: Ինձ մի թվանք տուր՝ գնամ միանամ Արաբոյի խմբին:

Կորի՛ր, լակոտ, դու ու՛ր, Արաբոն ու՛ր: Զենքը քո բանը չէ, սաստում է հայրը և պահանջում է, որ որդին վերադառնա վանք և Մաշտոց ու շարական կարդա:

Գևորգը խռոված փախչում է տնից:

Գյուղամիջով անցնելիս տեսնում է երկու բագրևանդցի քուրդ իրենց եկեղեցու ծառերից սաստկորեն վայր են թափում ընկույզները» Գևորգը հարձակվում է նրանց վրա և սկսվում է ուժեղ ծեծկռտուք: Վախեցած գյուղացիները օգնության չեն հասնում և Գևորգը մի լավ ծեծ կերած, գլուխը կապած հեռանում է գյուղից:

Բսանցի հայ գյուղացիների պանդխտության վայրը գլխավորապես Հալեպն էր, որտեղ նրանք աշխատում էին հացի փռերում և ջրաղացներում: Այդ երկրի մեջ արաբները սասունցիներին ուրիշ Հայերից տարբերելու համար սուսանի էին անվանում:

Յատուկ Պոէմ

Գևորգը գտնում է դեպի Դամասկոս գնացող մեկ-երկու բազրկան և նրանց հետ գնում է Հալեպ:

Բազրկանները քաղաքի դռներին հասնելով՝ ասում են.

Հալեպ, որ կասեն՝ սա է, մենք գնացինք:

Գևորգը անծանոթ քաղաքի դռանը շվար կանգնած, չի իմանում ինչ անի:

Մտածում է, որ, երևի Արաբոն էլ Հալեպ մշակության գնալիս առաջին օրը այդպես շվար կանգնած է եղել անծանոթ քաղաքի դռանը:

Տափարակ կտուրների միջից մի գմբեթ է երևում:

Էդ եկեղեցու անունը ի՞նչ է, հարցնում է մի արաբի:

Սուրբ քառասնից մանկանց:

Ո՞վ է շինել:

Մի սուսանի:

Շինողը ո՞ղջ է:

Իր շինածը կա, ինքը չկա: Հազար տարվա եկեղեցի է: Դամասկոսի մեծ խալիֆը, շարունակում է ծերունի արաբը, մի օր Դամասկոսից գալիս է Հալեպ: Ոչ ոք չի դիմավորում նրան, բացի մի կաշեգործ սասունցուց:

Խալիֆը հուզված հարցնում է սասունցուն.

Ի՞նչ բարիք ես ուզում, որ քեզ անեմ:

Ես Սասունի Բսանաց գավառի Գոմք գյուղից եմ, մեծդ խալիֆ, ասում է կաշեգործը: Մեր գյուղում Քառասուն Մանուկ անունով մի եկեղեցի կար: Եթե ուզում ես ինձ բարիք անել, մի կտոր հող տուր ինձ, որ դրա նման մի եկեղեցի շինեմ Հալեպում ապրող սասունցոց համար:

Ինչքա՞ն հող ես ուզում, հարցնում է խալիֆը:

Սասունցու թևատակին մի եզան կաշի է լինում: Պարզում է գետնին և ասում. Էս եզան փոստի չափ:

Արածիգ համեմատ քո ուզածը շատ քիչ է, նկատում է խալիֆը և եզան կաշին վերցնելով սրեմում է ծայրեծայր և նրա թելերի բռնած տարածության չափով հող է տալիս սասունցուն քաղաքի կենտրոնում:

Եվ սասունցին շինում է իր եկեղեցին:

Առավոտյան ժամկոչը զանգակները քաշելիս տեսնում է մի կապած գլուխ տղա իրենց վանքի շեմքին պառկած:

Ո՞վ ես, հարցնում է ժամկոչը քնածին արթնացնելով:

Ես Բասանց Գևորգն եմ:

Ղարիբ ես, ուրեմն:

Ղարիբ եմ ու գլուխս կոտրած:

Հալեպի հայերը գալիս են աղոթքի: Մեկ-երկուսը ճանաչում են Գևորգի ծնողներին և հարցնում են, թե ինչի համար է եկել:

Եկել եմ, որ մի քիչ փող վաստակեմ, մի հրացան առնեմ ու երթամ Սասունն ազատեմ սուլթանի լծից, ասում է Գևորգը և պատմում գյուղում իր գլխին պատահած դեպքը:

Սասունցի մի քանի հացթուխ և ջրաղացպան մտածում են, որ իրենք մի բան չդարձան, գոնե այդ ծուռ տղայից մի բան դուրս գա: Փող են հավաքում և Գևորգի համար մի հրացան առնելով, նրան Հալեպից ճանապարհ են դնում դեպի Սասուն:

Դե, գնա ազատիր հայոց ազգին:

Մի ծեր հացթուխ երկմտում է. էս տղան, ասում է նա, Սասունից ճղված գլխով եկավ Հալեպ: Ընկույզի համար երկու քրդից ծեծված մարդը ինչպես կարող է մի ամբողջ ազգ ազատել սուլթանի լծից:

Իսկ դու կհավատայի՞ր, որ գոմքեցի մի խեղճ ու կրակ կաշեգործ ընկներ Հալեպ և մեն-մենակ մի եկեղեցի շիներ քաղաքի կենտրոնում: Մինչև մարդու գլուխը չճղվի, նա ազգի ցավը չի հասկանա, առարկում է նրան երկրորդ հացթուխը:

Կտրիճ տղա է երևում, թող երթա իր բախտը փորձի, վրա է բերում մի երրորդ պանդուխտ սասունցի:

Գևորգի հայրն ու մայրը սպասում են մի շաբաթ, երկու շաբաթ՝ որդին չկա:

Վա՛յ, մեր խեղճ տղան կորավ, ասում են ու գլխներին տալիս:

Գևորգը մի քանի հորեղբայր ուներ: Սրանք կասկածում են, թե երևի, Հալեպ է գնացել: Որոշում են, որ իրենցից մեկը գնա Հալեպ, տղային գտնի բերի:

Յա բարի լուսո քաղցրիկ Քրիստոս, ասում է մեծ հորեղբայրը և բռնում Հալեպի ճամփան: Ու դեռ հորեղբայրը Հալեպ չհասած, Գևորգը զինված մտնում է Սասուն: ճանապարհին որսում է մի քարայծ և ուսին դրած գալիս է տուն: Տու՛ն, ի՛նչ տուն, որձաքարից շինված մի բերդ: Որսը դնում է ցած և մեկնվում թախտին՝ երեսով դեպի պատը:

Հայրը մտնում է ներս, տեսնում է անծանոթ մարդ թախտին քնած, գլխավերևում՝ հրացան, կողքին՝ մի սպանված քարայծ:

Կա չկա սա իմ տղան է, ասում է հայրը և արթնացնում քնած երիտասարդին:

Վատ հարևանը մարդուս գործիքի տեր կդարձնի, ասում է Գևորգը և հրացանն առնելով նույն օրը գնում միանում է Արաբոյի խմբին:

Արաբոյից հետո զինվոր է դառնում Սերոբ Աղբյուրին: Կռիվներից մեկում սպանում է սուլթանի ազդեցիկ չաուշներից մեկին և շուտով հայտնի դառնում Գևորգ Չաուշ անունով:

Միջահասակից քիչ ցածր էր Գևորգը, թուխ ու թիկնեղ և աչքերը բոցավառ: Վարսերը սև գանգուր էին, հոնքերը խիտ ու գեղագծված: Արաբոն ինձ շատ էր պատմել նրա մասին, բայց տեսած չկայի: Իսկ Սերոբն ասում էր, որ նա մեծ համբավ է ձեռք բերել քրդական աշիրեթների մեջ և այնպես վարժ է խոսում քրդերեն, որ դժվար է նրան տարբերել քրդից:

Սասունում աղջիկ փախցնելը խստորեն արգելված էր օրենքով, որպեսզի հայ գյուղերի համերաշխությունը չքայքայվի:

Ձեր մորուքները կնտել կտանք, եթե աղջիկ փախցնողին պսակեք, զգուշացրել էին սասունցիք իրենց քահանաներին:

Երբ Սերոբ Աղբյուրը Տեր Քաջի տանն էր, լուր եկավ, որ Գևորգ Չաուշի հորեղբայրներից մեկը կին է փախցրել Սասնո Աղբիկ գյուղից: Գյուղացիները փախցնողին հետապնդելով բռնել բերել էին նեմրութի Ասլանի մոտ, որ նա դատն անի: Նրան բերեցին այն ժամանակ, երբ ես Սերոբ Աղբյուրի զենքերն էի մաքրում:

Հասակավոր մարդ էր, մեծ բեղերով և գոմշե տրեխներով:

Ու՞մ համար էիր փախցնում այդ կնոջը, հարցրեց Սերոբը:

Ինձ համար, համարձակ պատասխանեց հորեղբայրը:

Ու՞ր տեսար առաջին անգամ նրան:

Առաքելոց վանքում:

Ո՞ր գյուղից էր և ինչու՞ էր գնացել վանք:

Դաշտի գյուղերից էր, բայց հարս էր տրված Սասուն: Էրիկը տաս տարի է, ինչ պանդխտության է գնացել և ոչ մի օգնություն ցույց չի տալիս իրեն: Խեղճ կինը դիմել էր Մշո Առաջնորդարանին, որ ինքը նեղության մեջ է: Առաջնորդարանը նամակ էր գրել վանքի վանահայր Հովհաննես վարդապետին, որ նրան վանք ընդունի, պայմանով, որ աշխատի իբրև հավաքարար և օգտվի վանքի հացից:

Դու ի՞նչ էիր անում վանքում:

Ես վանքում տնտես էի:

Այդ կնոջը գյուղի՞ց փախցրիր, թե վանքից:

Գլուղից:

Որտե՞ղ է գտնվում այդ գյուղը:

Ծովասարի վրա:

Աղբիկցիները ձեզ որտե՞ղ բռնեցին:

Բսանաց ճանապարհին:

Այդ կինը ամուսին ունի, դու ի՞նչ իրավունքով փախցրիր նրան: Չէ՞ որ դու ծեր ես, իսկ նա՝ ջահել:

Մեր երկիր հազար բան կպատահի, փաշա, թող դա էլ լինի հազար ու մեկը, պատասխանեց սասունցին:

Շիտակ խոսիր, դու այդ կնոջը քե՞զ համար փախցրիր, թե Գևորգի:

Ինձ համար փախցրի, փաշա:

Չգիտեի՞ր, որ Սասունում կին փախցնելը օրենքով արգելված է:

Գիտեի, բայց եղավ...

Մարդուն մի կողմ տարան, կնոջը ներս բերին:

Դու այդ մարդու հետ ինչու՞ փախար, հարցրեց փաշան: Ու՞մ համար կերթայիր՝ նրա՞, թե ուրիշի:

Ես էդ մարդու հետ կերթայի իրեն համար: Էրիկս էս տաս տարի զուրբաթ է գնացել, ու ես մնացել եմ վանքի սեղանին:

Երկրորդ օրը նորից հարցաքննության բերեցին: Աղբիկցիները համառորեն դատաստան էին պահանջում: Սերոբը կանչեց Աղբիկ գյուղի ռեսին, գելեցի մի քանի իշխանների և Տեր Քաջին: Նրանք գլուխ տվին երկրի մեծին ու միաձայն ասին նրան.

Դրանց դատաստանը դու մեզ հանձնիր, փաշա:

Այդ ժամանակ եկան ասացին, թե Գևորգ Չաուշը Տաղվրնիկ է հասել: Սերոբը իր զինվորներից երկուսին ուղարկեց, որ նրան իր մոտ կանչեն:

Երկար գյուղ էր Գելին և թաղերը իրարից շատ հեռու: Թաղից թաղ մարդ կանչելու համար պետք է բոռային:

Դեպի Ծովասար իջնող մի սար կար Անդոկի մոտ, անունը Խտան:

Զինվորները ելան Խտանա կածը և բոռացին.

Գևորգ Չաու՛շ, Տեր Քաջի տուն արի, բոռաց առաջին զինվորը:

Քո հորեղբայրը կի՛ն է փախցրել Աղբիկ գյուղից, բոռաց երկրորդ զինվորը:

Գևորգ Չաուշը վերցրեց հրացանը և Խտանա կածը անցնելով եկավ իր հայդուկապետի մոտ:

Տեր Քաջի տանը շատ մարդիկ կային: Մեծամեծ իշխաններ, քահանա և ռամիկ:

Սոսեն էլ ներկա էր:

Բարև տվեց բոլորին և հրացանը սյունից կախելով նստեց:

Եվ Նեմրութի Սերոբը դիմեց նրան՝ ասելով.

Ինչպես է, որ դու՝ ամենահին զինվորը այս երկրի, ուր օրենք է դրված, որ սասունցին իրավունք չունի աղջիկ փախցնելու, թույլ ես տվել, որ քո հորեղբայրը կինարմատ փախցնի Սասնո աշխարհից:

Յատուկ Պոէմ

Գևորգը պատասխանեց.

Դու սերն ու մածունը կերել ես, չորթանի՞ն ես ինձ կանչել:

Ասաց ու նայեց Սոսեի աչքերին:

Եթե դու փոքր չափով պատիվ ունենայիր մեծավորիդ հանդեպ, չէիր հանդգնի ինձ այդպիսի խոսք ասել: Ես ի՞նչ սեր ու մածուն եմ կերել, դիմադարձեց Սերոբը և սաստիկ առնված ձեռքը նետեց դաշույնին:

Սոսեն բռնեց Սերոբի թևը:

Գևորգը ոտքի ելավ:

Իմ հորեղբայրը այդ հանցանքը կատարել է ինձանից ծածուկ, ասաց նա: Դու ես երկրի մեծը և դատն ու դատաստանը քո ձեռքին է, ինչպես ուզում ես, այնպես էլ վճռիր:

Եթե դատն ու դատաստանը իմ ձեռքին է, ուրեմն այս գործը ես քեզ եմ հանձնում, Արաբոյի հին զինվորիդ, որ այժմ իմ զինվորն է: Գնա և ինքդ դատիր, ասաց Աղբյուր Սերոբը և նույնպես ոտքի ելավ:

Ի՞նձ ես հանձնում:

Այո, քեզ:

Գևորգ Չաուշը առանց պատասխանի, զենքը վերցնելով՝ գլխահակ հեռացավ Տեր Քաջի տնից:

Ես հետաքրքրությունից գնացի նրա ետևից դեպի այն մարագը, ուր փակված էին Գևորգի հորեղբայրը և աղբիկցի կինը:

Մոլեգին էր Գևորգը և անկշռադատ:

Նրա ինքնասիրությունը վիրավորված էր: Կանգնեց շեմքին և Հալեպից բերված հրացանը որոտաց հորեղբոր կրծքին: Երկրորդ գնդակով սպանեց աղբիկցի

կնոջը և, հրացանը վիզը գցելով, մոայլադեմ հեռացավ դեպի Շուշնամերկի անտառները:

Գևորգը այլևս չվերադարձավ Սերոբի խմբի մեջ:

Ես առաջին անգամ էի հրազենի կրակոց լսում այդքան մոտիկից և այդպիսի ուժգնությամբ:

Ես այդ ժամանակ ընդամենը տասնյոթ տարեկան էի:

Յատուկ Դրէմ